ԲԱՐԻ ԵՐԹ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը հանրապետության հայագիտական խոշոր կենտրոններից մեկն է: Տասնամյակներ շարունակ ինստիտուտի հայոց լեզվի, հայոց պատմության, հայ գրականության ամբիոններում կատարվել են ծանրակշիռ ուսումնասիրություններ՝ նվիրված գրաբարի, ընդհանուր լեզվաբանության, ժամանակակից հայոց լեզվի, հայ գրականության հին, նոր եւ նորագույն շրջանների, հայ-բյուզանդական, հայ-ռուսական հարաբերությունների առանցքային հարցերին: Ակնավոր հայագետներ Գ. Ղափանցյանի, Ա. Ղարիբյանի, Ա. Աբրահամյանի, Վ. Պարտիզունու, Վ. Քոսյանի, Մ. Հասրաթյանի, Լ. Շահինյանի հայագիտական ուսումնասիրությունների ավանդույթներն այսօր շարունակում են նրանց սաները, որոնցից շատերը հանրապետությունում ճանաչված գիտնականներ են:

Շնորհավորում եւ ողջունում եմ բանասիրական ֆակուլտետի՝ «Հայագիտական հանդեսի» հրատարակման նախաձեռնությունը: Հավատում եմ, որ պարբերականի էջերում նորովի կմեկնաբանվեն հայագիտության խնդիրները, ճանաչված գիտնականների ղեկավարությամբ կաճեն նոր ուժեր:

Բարի երթ ու ստեղծագործական լուրջ հաջողություններ:

Գ. Ե. Բաղդասարյան
ԳԱԱ ակադեմիկոս
Խ. Աբովյանի անվան մանկավարժական
ինստիտուտի ռեկտոր

A.R.A.R.@